

ՎԱՋԻ ԱՐՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀՈՂՈՒՄ ԵՎ ՏԵՐԵՎԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՄԻ ԱՃԸ ԿԱՆՎԱԾ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՑ

Ա. Ն. Հակոբյան
կենսաբանության առնչում

Վազի սաղարթի և արմատային համակարգի միջև որոշակի հարաբերակցական կապ կա։ Որքան լավ է զարգացած վազի սաղարթը, այնքան հզոր է նրա արմատային համակարգը։ Վազի արմատները լավ են զարգանում ստորգետնյա բնի այն կողմում, որտեղ լավ է զարգանում սաղարթը։ Դա լավ է նկատվում հատկապես երիտասարդ վազի վրա։ Արմատների կողմից քրի կլանումը բարձր գործընթաց է, որին մասնակցում են հիմնականում արմատամագիկները։ Ջրի անընդհատ փոխադրումը դեպի տերևները ենթարկվողություն է ստեղծում, որ իրականացնում է արմատային գործընթացներից մեկը՝ ֆոտոսինթեզը։

Խաղողի վազը լուսասեր բույս է, վատ լուսավորության պայմաններում ընկնում է տերևների առիմիլյացիայի արդյունավետությունը, որի հետևանքով քիչ քանակությամբ օրգանական նյութեր են սինթեզվում։ Թույլ սննդատության պայմաններում վատանում է շիվերի հասունացման, ծոցային բողբոջներում ծաղկաբույլերի սաղմնային զարգացման, պտուղներում շաքարի կուտակման և բույսին խիստ անհրաժեշտ այլ գործընթացները։

Այգու հաճախակի ոռոգումը նպաստում է բարակ արմատների մոտեցմանը հողի մակերևույթին, որը բացասական ներույթ է։

Հզոր և հողում խոր տարածված արմատային համակարգը ժամանակին ապահովելով վերգետնյա օրգաններին քրով և հանքային սննդանյութերով բարձրացնում է վազերի աճը և բերքատվությունը։

Մեծ է տերևային մակերեսի դերը վազի կյանքում։ Հանդիսանալով օրգանական նյութերի սինթեզող, սրանք նպաստում են բույսի աճին, շիվերի հասունացմանը, ծաղկաբույլերի սաղմնային զարգացմանը։ Ըստ գրականության տնտեսության (Ջախարովա Ե.Բ., 1953, Ստոն Կ.Դ., 1971, Հակոբյան Գ.Ա., 1969) յուրաքանչյուր 1կգ խաղողի համար վազը պետք է ունենա ոչ պակաս, քան 1.2մ² տերևային մակերես։ Դրանից քիչ լինելու դեպքում խաղողն ունենում է ցածր արակ։

Ուսումնասիրությունները կատարվել են ԱրԴՀ ուսումնա-փորձնական հողամասում, որը գտնվում է «Գեուպի» տնդամասում։ Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից 750մ։ Այգու տարածքը 1հա է, վազերը տնկված են 3x2 մ սխևնայով։ Վազի տարիքը՝ 3 տարեկան։

Տնկված են «Կարդինալ», «Ռաբաթիելի», «Փնդողին» և այլ խաղողի սորտեր։

Հետազոտությունները կատարվել են 15 վազերի վրա /3 կրկնություններ/։

Ուսումնասիրվել է վազերի տերևային մակերեսը ըստ ամիսների և արմատային համակարգի տարածումը հողի մեջ՝ կախված խոնավությունից։ Վազի տերևային մակերեսը որոշվել է արոք. Ա.Ա. Մելնիկի ամպելոգրաֆիական մեթոդով։ Արմատային համակարգի տարածումը հողում ուսումնասիրվել է «կտրվածքի» մեթոդով՝ ըստ Վ.Ա. Կոլմանիկովի։

Վազի տերևային մակերեսի աճը կախված խոնավությունից ընթացել է հետևյալ կերպ (աղյուսակ 1)

Աղյուսակ 1

Տերևային մակերեսի կախվածությունը հողի խոնավությունից (2005թ.)

Աշխատանքի բնույթը	Հաշվառման օրերը					
	25 / VI	25 / VII	5 / VIII	25 / VIII	30 / VIII	25 / IX
Հողի խոնավությունը (%-ով)	21.5	18.3	16.4	14.3	13.4	12.4
Տերևային մակերեսը մեկ վազի վրա (մ ²)	16.2	18.4	13.5	9.4	6.8	5.2

Հողի խոնավությունը վազերի աչքերի բազմակուց մինչև ծաղկման վերջը գտնվում էր դաշտային խոնավության սահմաններում, որը մատչելի էր բույսին։ Տերևային մակերեսը մեկ

վազի վրա հունիսի 25-ի տվյալներով կազմել է 16.2 մ²: Հունիսի 10-ին կարկուտի հետևանքով խաղաղի վազերը խիստ տուժվել են: Վնասվել է տերևային մակերևույթը, կտրվել են շիվերը: Կարճացվել են այն մատները, որոնց շիվերը կտրվել են, թողնելով հիմքի 2-3 հասգույցները՝ տերևներով: Խոր ծերատելով շիվերը նշատառում ենք թճաշիվերի, բազմամյա ճյուղերի, քնած թուղթջուկներից, մատերի հիմքի աչքերից առաջացած շիվերի արդյունավետ աճելուն: Դրանով ապահովվում ենք վազը ախտվյալացիոն մակերևույթով, որը կնպաստի տնկարկների հաջորդ տարվա քնորատվությանը:


Հուլիսին հողի խոնավությունը քիչ նվազել է, սակայն այն դեռևս մատչելի էր վազին: Օգոստոսի սկզբներին հողի խոնավությունը իջել է մոտենալով մագաղթային կապի խզման ստորին սահմանին: Հողի խոնավությունը դարձել է վազի համար դժվար մատչելի: Արդյունքում վազի տերևային մակերևույթը կրճատվել է: Օգոստոսի վերջին հողի խոնավությունը մոտեցել է վազի թաթամման գործակցին և այն դարձել է դժվար մատչելի: Վազն իր գոյությունը պահելու համար սկսել են չորանալ շիվերի հիմքին մոտիկ գտնվող ծեր տերևները: Արդյունքում վազի տերևային մակերևույթը խիստ կրճատվել է:

Այսպիսով՝ հողի խոնավության պակասը խիստ կրճատել է վազի տերևային մակերևույթը: Վազի արմատային համակարգի տարածումը հողում ուսումնասիրել ենք «վարվածքի» նդանակով: Հոկտեմբերի վերջին, երբ ավարտվել է վազի վերգետնյա օրգանների աճը, զգուշությամբ հողը փարվել է և կատարվել կտրվածք՝ 2մ խորությամբ և 1մ լայնությամբ: Փորձի արդյունքներն ամփոփված են ստյուսակ 2-ում և նկար 1-ում: Ուսումնասիրություններից ստացել ենք, որ վազի արմատների հիմնական մասը՝ 83% զբաղեցնում են AB և B հորիզոնները, այսինքն 20-90 սմ խորությունը: Ընդ որում կմախքային և կիսակմախքային արմատները այդ հորիզոններում կազմել են շատ չնչին մասը՝ 13 հատ, մինչդեռ մեկ մմ-ից քիչ տրամագիծ ունեցող արմատների քանակը բավականին շատ էր՝ 35 հատ:

Աղյուսակ 2

Արմատային համակարգի կտրվածքի քանակը և պայմանական նշանները

Հողի գենետիկական հորիզոնի խորությունը (սմ)	Պայմանական նշանները և տրամագծերը (մմ)				Ընդամենը
	● > 8	⊙ 3-8	○ 1-3	• < 1	
AB – 0 – 60	2	2	3	18	25
B – 60 – 90	-	2	4	17	23
BC – 90 – 120	-	1	1	8	10
Ընդամենը	2	5	8	43	58



Նկ. 1. Վազի արմատային համակարգի տարածումը հողում կազմված խոնավությունից

Այսպիսով, վազերի արմատների շուրջ 83% տարածվել են AB և B հորիզոններում: Սակայն խոնավության պակասի հետ կապված որոշ արմատներ ավելի խորն են թափանցել՝ ձգտելով հողի խորին խոնավ շերտերը:

Ամփոփում

Ելնելով ԱրՊՀ-ի ուսումնափորձնական հողամասում կատարված դաշտային փորձերի արդյունքներից՝ հանգել ենք այն եզրակացության, որ փորձադաշտի հողի խոնավությունը, անբավարար ռոտման պատճառով, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին խիստ նվազում է: Իսկ այդ ամիսներին ԼՂՀ տարածքում մթնոլորտային տեղումները շատ աննշան են (52մմ): Հողի խոնավության պակասը զգալի կրճատում է վազի տերևային մակերեսը, որից կախված խիստ ընկնում է օրգանական նյութերի սինթեզը: Անբավարար հողի խոնավության պատճառով ընկնում է արմատների հանքային սննդառությունը, որը բացասաբար է անդրադառնում ծոցաբողբոջներում ծաղկաբույլների սաղմնային զարգացմանը, որից էլ կախված է վազի բերքատվությունը:

Ուստի առաջարկում ենք հողամասը ռոտել ըստ պահանջվող նորմայի:

Резюме

Исходя из результатов полевых опытов, выполненных на учебно-опытном участке АРГУ, мы пришли к выводу, что по причине недостаточной поливки влажность почвы за период август-сентябрь резко понижается. А в этот период на территории НКР атмосферные осадки незначительны (52мм). По причине недостатка влажности почвы резко уменьшается листовая поверхность лозы, в связи с чем резко падает уровень синтеза органических веществ. По этой же причине уменьшается минеральное питание корней. Указанные факты отрицательно влияют на зародышевое развитие пазушных почек соцветий, от чего зависит урожайность лозы.

В связи с этим, предлагаем орошать землю в соответствии с требуемыми нормами.

Գրականություն

1. Պ.Կ. Այվազյան, Խաղողագործություն, Երևան, 2000թ.:
2. Захарова Е.И., О площади питания виноградной лозы, Виноделие и виноградарство СССР, 1953, N11.
3. Колесников В.А., Метод измерения корневых систем плодовых и ягодных растений, Москва, 1962.
4. Мельник С.А., Труды одесского сельхозинститута, том VIII, Одесса, "Виноградарство и плодоводство".